ԱՍՏՎԱԾ ԻՐ ԻՍԿ ՄԵԿՆԱԲԱՆ Է

Մեր Երկնայի՛ն Հայր, Քո մի Խոսքն ավելի կարևոր է, քան այն ամենը, ինչ կարող է մարդ անել կամ ասել, որովհետև մարդիկ սպասում են Քեզ տեսնել: Մենք շնորհակալ ենք Քեզանից այդ ակնկալողների համար: Նրանք սպասում են, որ ինչ-որ բան է լինելու, և երբ մարդիկ ինչ-որ բանի ծարավ են, անդունդը Անդունդին է կանչում, և այդ կանչին պատասխանելու համար պետք է անդունդ լինի: Մենք այս երեկո դրա համար ենք այստեղ, որովհետև ծառայողների և մարդկանց սրտերում դրվել էր միատեղ հավաքվել, խնդրել Քո ողորմությունն ու օրհնությունները՝ հավատալով, որ Դու կբժշկես հիվանդներին, կփրկես կորսվածներին և կբացահայտես Քո Խոսքը:

2 Երկնավոր Հայր, խնդրում ենք շնորհիր դա մեզ, քանզի ամեն երեկո խոնարհությամբ սպասում ենք Քեզ: Թող Սուրբ Հոգու այնպիսի հեղեղ լինի, որ ոչ ոք չնկատի իր շուրջը ինչ է կատարվում ու կարողանա միայն Աստծուն տեսնել: Թող այնպիսի աղաղակ դուրս գա Աստծո ծարավ ժողովրդի միջից, որ արթնություն լինի ամբողջ երկրով մեկ և ամեն եկեղեցի լցվի մարդկանցով, որ մեղավորները խնդրեն Աստծո ողորմությունը, և, և Սուրբ Հոգին բժշկի հիվանդներին, քայլել տա կաղերին և հարություն տա մեռելներին, և շնորհի այն բաները, որոնք խոստացված են Քո Խոսքում:

3 Ե՛կ, Տե՛ր Հիսուս, և կատարի՛ր Քո խոստումը: Ե՛կ մեզ մոտ այս երեկո: Մենք հավատում ենք, որ Դու նույնն ես երեկ, այսօր և հավիտյան, որ Քո խոստումները չեն կարող չկատարվել: Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Քո Խոսքը չի անցնի: Թող մեր միտքը բացվի, թող Սուրբ Հոգին գա և պարարտացնի հողը: Թող մեր միտքը բացվի Հոգու և Աստծո զորության համար, որ կարողանա բացահայտել Իր խոստումի Խոսքերը մեր միջոցով:Խնդրում ենք դա Հիսուսի Անունով: Ամեն:

4 Եվ այսպես, այս երեկո ովքեր հետևում են թեմային, եկե՛ք դիմենք Սուրբ Գրքից Պետրոս Առաքյալի

երկրորդ թղթին, և սկսենք տասնհինգերորդ համարից, պարզապես համառոտ հիմնվելով Գրվածքների վրա, մի քանի վայրկյան զրուցելու համար.

«Ուստի պիտի ջանամ, որ այս աշխարհից իմ հեռանալուց հետո էլ միշտ ունակ լինեք այս բաները հիշելու:

Որովհետև Տեր Հիսուս Քրիստոսի զորությունն ու գալուստը ձեզ ցույց տվեցինք ոչ թե վարպետորեն հորինված առասպելների հետևելով, այլ Նրա մեծափառության ականատեսը լինելով»:

5 Սիրում եմ այս խոսքերը՝ «ականատեսը լինելով»: Ոչ թե ինչ–որ առասպելի է,այլ մենք ականատեսն ենք այն բանի, ինչի մասին խոսում ենք:

«Քանի որ Ինքը Հայր Աստծուց ստացավ փառքն ու պատիվը, և գերազանց փառքից եկավ Նրան այն ձայնը, թե՝ «Սա է Իմ սիրելի Որդին, ում հավանել եմ»:

Եվ երկնքից եկած այս ձայնը մենք լսեցինք, երբ Նրա հետ էինք՝ սուրբ լեռան վրա:

Եվ ունենք նաև մարգարեական խոսքը, որ ավելի արժանահավատ է, և լավ կանեք, եթե դրան անսաք՝ որպես մթության մեջ լույս տվող մի ճրագի, մինչև լույսը բացվի ու առավոտյան աստղը ծագի մեր սրտերի մեջ.

նախապես այս իմանալով, որ Գրքում ո՛չ մի մարգարեություն իր հատուկ մեկնությունը չունի:

Քանի որ հին ժամանակներում մարգարեությունը մարդու կամքով չտրվեց, այլ Աստծո սուրբ այրին *խոսեց՝ Սուրբ Հոգու կողմից դրդված»:*

6 Թող Տերն ավելացնի Իր օրհնությունները Իր Խոսքի ընթերցմանը: Ես մտադիր եմ որպես թեմա վերցնել սա՝ *«Աստված Իր իսկ մեկնաբանն է»:*

7 Մենք ապրում ենք խառնաշփոթ ժամանակներում. ժամանակներ, երբ տղամարդիկ և կանայք այլևս չգիտեն, թե ինչ են անում: Ամեն բան կարծես անկարգության մեջ է: Ամեն ինչում կարծես այնքան տարբեր տեսակետներ կան, բայց դա սատանայի գործն է:

8 Աստված չի կարող արդարությամբ դատել մարդկանց, եթե գոյություն չունենա մի չափանիշ, որով դատելու է նրանց: Աստվածաշունչն ասում է, որ Նա բոլոր մարդկանց դատելու է Հիսուս Քրիստոսով, իսկ Հիսուս Քրիստոսը Խոսքն է: Սուրբ Հովհաննեսի առաջին գլխում ասվում է.

> *«Սկզբում էր Բանը (անգլերեն թարգմ. մեջ՝ Խոսքը), և Բանն Աստծո մոտ էր և Բանն Աստված էր:*
>
> *Եվ Բանը մարմին եղավ և մեր մեջ բնակվեց...»:*

9 Եվ այսպես, մենք բոլորս Նրա հատկությունների դրսևորումն ենք այսօր: Աստծո մեջ...Սկզբում Նա նույնիսկ Աստված չէր, մենք պարզապես Նրան «Հավիտենական» կկոչենք: Նա Աստված չէր, որովհետև (անգլերեն բառը) *«Աստված»* նշանակում է «պաշտամունքի առարկա», իսկ Նրան պաշտող ոչինչ չկար: Հերևաբար, Նա հավիտենականն էր, ամեն իմաստության Աղբյուրը: Եվ ամեն իմաստության այս Աղբյուրի մեջ չկար ո՛չ ատոմ, ո՛չ մոլեկուլ՝ ոչինչ, ո՛չ լույս, աստղ, լուսին, ո՛չ էլ ուրիշ բան: Աստված, ում հիմա ճանաչում ենք որպես Աստված, հզոր Հոգի, որ Հավիտենական էր (երբեք սկիզբ չի ունեցել, երբեք էլ վերջ չի ունենա), Նա էր այնտեղ: Նրա մեջ հատկություններ կային՝ Աստված լինելու հատկություն, հետո Հայր լինելու հատկություն, Որդի լինելու հատկություն, Փրկիչ լինելու հատկություն, Բժշկող լինելու հատկություն: Այս բոլոր հատկությունները Նրա մեջ էին: Եվ այժմ Նա...Այս բաները, որոնք այդ ժամանակից ի վեր բացահայտվում են, պարզապես Նրա հատկությունների դրսևորումն են:

10 *«Ատրիբուտներ»* ասելով, ի նկատի ունեմ Նրա «մտքերը»: Իսկ *խոսքը* արտահայտված միտքն է: Այն ժամանակ այդ ամենը Նրա մտքի մեջ էր: Եվ երբ Նա ասաց. «Թող լինի...», և եղավ: «Թող լինի...», և եղավ:

11 Իսկ այժմ հիշե՛ք, դուք՝ քրիստոնյաներդ, Նրա մտքերի մեջ էիք, մինչ աշխարհի արարումը, և դուք Նրա մտքերի արտահայտումն եք: Մինչ աշխարհի արարումը դուք Քրիստոսի մեջ էիք (ամեն): Սկզբում դուք Աստծո մեջ էիք, դա ձեզ դարձնում է Նրա ենթակաները, հասկանո՞ւմ եք: Եվ այս ամենի ամբողջությունն Ինքը՝ Աստված է, Ով մարդու կերպարանք վերցրեց Իր վրա, որպեսզի կարողանանք Նրան շոշափել, տեսնել և այլն: Ահա թե Ով է Աստված՝ ամեն բանի հեղինակը:

12 Հետո մարդիկ ասում են. «Մեկնությունը...»: Վերջերս այստեղ մի հավաքույթի ժամանակ ելույթ էի ունենում, և մի մարդ ինձ ասաց. «Եղբա՛յր Բրանհամ, դուք սխալ մեկնություն եք տալիս: Դուք Դա ճիշտ չեք մեկնաբանում»:

13 Մենք լսում ենք...Նրանք գնում են մեթոդականների մոտ և վերջիններս ասում են. «Մկրտականներն են սխալ մեկնաբանում», մկրտականներն էլ ասում են, թե՝ «Հոգեգալստականներն են սխալ մեկնաբանում», հոգեգալստականներն ասում են. «Միադավաններն են սխալ մեկնաբաում», միադավաններն ասում են. «Աստծո ժողովնե է սխալ մեկնաբանում»: Եվ ամեն մեկն ասում է, որ մյուսն է սխալ մեկնաբանում:

14 Աստված Իր իսկ մեկնաբանն է: Նա կարիք չունի, որ որևէ մեկը Նրա փոխարեն մեկնաբանի: Նա Ինքն է տալիս Իր սեփական մեկնությունը: Ո՞վ է մարդ, որ կարողանա մեկնաբանել Աստծուն: Աստված Իր իսկ մեկնաբանն է:

15 Պետրոս Առաքյալն ասում է, մենք պարզում ենք, որ սկզբում, երբ Աստված ասաց. «Թող լո՛ւյս լինի», և լույս եղավ, դա եղավ մեկնությունը: Երբ Աստված ինչ–որ բան էր ասում և դա կատարվում էր, դա էլ լինում էր Աստծո մեկնությունը, որ Իր Խոսքը ճշմարիտ է: Հասկանո՞ւմ եք: Երբ Նա ասաց. «Թող լո՛ւյս լինի», նախ դա Իր մտքում էր, մինչ լույսի նման որևէ բան գոյություն ունենալը: Երբ Նա ասաց. «Թող լո՛ւյս լինի», լույսը ժայթքեց երկնքում, դա էր մեկնությունը: Պետք չէր, որ որևէ մեկը մեկնաբանի դա, որովհետև Աստված այդպես ասաց, և եղավ: Երբ Աստված խոսում է և դա կատարվում է, դա էլ հենց Նրա Խոսքի մեկնությունն է: Ինչո՞ւ տղամարդիկ չեն կարողանում տեսնել դա: Ինչո՞ւ մարդիկ չեն կարողանում տեսնել դա:

16 Երբ Աստված խոստում է տալիս և ասում է... Ծննդոց գրքում՝ սկզբում, Նա սահմանեց Իր Խոսքը յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար, թե ինչպես էր այն ընթանալու սկզբից մինչև վերջ: Եվ այս դարերի ընթացքում եկեղեցական աշխարհն այս բոլոր բաները խառնեց ավանդույթների և այլ բաների հետ, իսկ Աստված միշտ՝ թե՛ Հին, թե՛ Նոր Կտակարանների ընթացքում ասպարեզ է ուղարկել մարգարեներին: Իսկ Տիրոջ Խոսքը գալիս է մարգարեներին: Ինչպե՞ս: Աստծո Խոսքի հայտնությամբ: Աստծո հայտնությունն ինքն է վկայում՝ արդյոք դա ճիշտ է, թե ոչ: Ոչ ոք չպետք է Դա

մեկնաբանի, Խոսքը ինքն իրեն մեկնաբանում է: Աստված դա խոստացել է, և ահա այն կատարվում է:

17 Ի՞նչ օգուտ ունի էլի ինչ–որ բան ասել Դրա վերաբերյալ: Ո՞վ է այդ մեղավորը, որ կհամարձակվի ասել (երբ Աստված խոստում է տվել և կատարում է այն), որ այդ մեկնությունը սխալ է: Աստված Ինքն է տալիս Իր սեփական մեկնութունը: Նա մեկնաբանի կարիք չունի, Աստված Ինքն Իրեն մեկնաբանում է՝ կատարելով այն, ինչ Նա խոստացել է անել:

18 Օ՛, եթե միայն եկեղեցին կարողանար տեսնել դա և այն խոստումները, որոնք տրված են եղել ամեն ժամանակաշրջանի համար: Մյուս բոլոր ժամանակաշրջանների (նույնիսկ եկեղեցու յոթ շրջանների) ընթացքում Աստված ասպարեզ է ուղարկել և բացահայտել է այն, ինչ Նա խոստացել է անել: Ամեն բան, ոչինչ անկատար չի մնացել:Միանգամայն: Ինչ Նա ասել է, որ պիտի անի, կատարել է:

19 Որովհետև, երբ Աստված Եսայի գրքում ասաց. «Կույսը պիտի հղիանա», այդպես էլ եղավ: Ուրեմն, ո՞վ, ո՞վ կարող է մեկնաբանել դա: Աստված Ինքը տվեց մեկնությունը:Նա ասաց. «Կույսը պիտի հղիանա», այդպես էլ եղավ: Դուք ինչ...դուք չեք կարող...Ոչինչ չի կարելի ավելացնել, որովհետև Աստված ասաց, որ Նա կհղիանա և այդպես էլ եղավ: Բայց այն ժամանակ եկեղեցին չափազանց կույր էր դա տեսնելու համար: Նրանք իրենց սեփական գաղափարն ունեին դրա վերաբերյալ, հասկանո՞ւմ եք: Դա շատ–շատ էր տարբերվում իրենց ակնկալիքից:

20 Պետրոս Առաքյալն այստեղ էր, ով հղում անելով ասում է. «Աստված բացահայտեց Քրիստոսին Իր Խոսքով, Նա ասաց. «Սա է Իմ սիրելի Որդին»»: Այս հավատացյալները կանգնած էին այնտեղ: Եվ Քրիստոսը Աստծո բացահայտումն էր: Նա միշտ բացահայտել է Քրիստոսին Իր Խոսքի միջոցով, որովհետև Քրիստոսը Խոսքն է: Նա միշտ բացահայտվում է:

21 Երբ Նա ասաց...Նոյի օրերում Քրիստոսը նրա մեջ էր: Հավատո՞ւմ եք դրան: Նոյն ասաց. «Անձրև է գալու: Անձրև է գալու, և երկիրը կործանվելու է»: Անձրևը եկավ: Դա մեկնության կարիք չուներ: Անձրևը եկավ, որովհետև Աստված Նոյի միջոցով ասել էր. «Անձրև է գալու»: Նա մարգարե էր, և դրա ապացույցն այն էր, որ նրա ասածը կատարվեց: Ուստի նրանք դա մեկնելու կարիք չունեին:

22 Գուցե նրանցից ոմանք, որ շուրջը կանգնած էին, ասում էին. «Այս մարդը չի հասկանում, թե ինչ է խոսում»:

23 Բայց Աստված միշտ խոստացել է. «Եթե ձեր մեջ մի հոգևոր կամ մարգարե լինի, և ինչ որ նա ասի, կատարվի, ուրեմն լսեք նրան»: Ճիշտ է, որովհետև դա ճշմարտությունն է: Դա պետք է Խոսքին համապատասխան լինի: Եվ Նոյը ներդաշնակ էր Խոսքի հետ: Երբ նա մարգարեացավ, որ անձրև է գալու՝ եկավ, դա մեկնության կարիք չուներ, որովհետև դա պարզապես եղավ:

24 Եսային ասաց. «Կույսը պիտի հղիանա», և նա հղիացավ: Դա չափազանց արտասովոր էր: Որովհետև կույսը դրանից հարյուրավոր տարիներ հետո հղիացավ, հասկանո՞ւմ եք»:

25 Դա այնքան արտասովոր էր, որ Հովսեփ անունով՝ բարի մարդը, իր փեսացուն «արդար մարդ լինելով և չուզենալով նրան խայտառակել...»: Այն ժամանակ այդ բարի մարդը, պատկերացնո՞ւմ եք, թե որքան դժվար էր Հովսեփի համար, երբ նա նշանված էր Մարիամի հետ:

26 Նա նշանված էր: Այն ժամանակ նշանդրեքը չեղարկելը նույնացվում էր շնություն անելելու հետ: Եվ Հովսեփին, անշուշտ, թվում էր, թե Մարիամը փորձում է նրա մեջ ապաստարան գտնել, կամ նրան օգտագործել որպես վահան իր մեղքը ծածկելու համար, որովհետև պարզվեց, որ նա մայր է դառնալու միայն նշանված լինելով, առանց ամուսնանալու: Օրենքի համաձայն նման արարքի համար պետք է քարկոծեին մինչև ի մահ:

27 Հովսեփը՝ նրա փեսացուն, արդար մարդ էր, շատ արդար մարդ էր: Նա հավատում էր Աստծուն: Մարիամը իր գեղեցիկ, մեծ, նուրբ աչքերով նայեց և ասաց. «Հովսե՛փ, Գաբրիել հրեշտակապետն այցելեց ինձ և ասաց, որ ես կհղիանամ առանց այր ճանաչելու»:

28 Եթե Հովսեփը միայն դիմեր Սուրբ Գրքին, որովհետև մարգարեն արդեն ասել էր, որ նա հղիանալու է: Աստված էր մեկնում Իր սեփական Խոսքը: Հասկանո՞ւմ եք: Բայց դա չափազանց արտասովոր էր:

29 Ահա թե ինչումն է խնդիրը ամեն ժամանակաշրջանում: Աստծո Խոսքն օտար է մարդկանց համար, Այն չափազանց արտասովոր է: Աստված միշտ ինչ–որ անսովոր բան է անում: Ուր որ Աստված է, անսովոր բան է կատարվում: Դա աշխարհիկ համակարգերին

հակառակ էր, որովհետև չէր համապատասխանում իրենց պատկերացումներին, բայց Աստված գալիս և արտասովոր բան է անում:

30 «Ինչպե՞ս կարող էր կույսը հղիանալ»: Հովսեփն անկեղծ էր և Աստծուց պատասխան էր փնտրում:

31 Այն ժամանակ Աստված խոսեց նրա հետ երազում և ասաց. «Հովսե՛փ, Դավթի որդի՛, մի՛ վախեցիր կին առնել նշանածիդ՝ Մարիամին, որովհետև նրանում ծնվածը Սուրբ Հոգուց է: Աստված նրան հովանի եղավ: Ահա թե ինչպես դա եղավ»:

32 Երբևէ ուշադրություն դարձրե՞լ եք այն բանին, թե Աստված ինչպես խոսեց Հովսեփի հետ: Երկրորդական ձևով, երազի միջոցով: Բոլորս գիտենք, որ կան երազներ, մենք հավատում ենք երազներին: Ես հավատում եմ երազներին: Աստված միշտ խոսել է մարդկանց հետ երազների միջոցով: Բայց դրանք երկրորդական միջոց են, հասկանո՞ւմ եք, դրանք կարող են ճիշտ կամ սխալ լինել, քանի դեռ չեն մեկնաբանվել: Բայց նրա երազը մեկնության կարիք չունեցավ: Աստված Ինքն անմիջականորեն խոսեց Նրա հետ, որովհետև այն ժամանակ երկրում ոչ մի մարգարե չկար՝ մեկնություն տալու համար: Չորս հարյուր տարի էր, ինչ մարգարե չկար, դրա համար հաջորդ ամենալավ միջոցը, որով Աստված հոգ տարավ Իր սեփական Որդու բարիքի համար այն էր՝ խոսել Հովսեփի հետ երազի միջոցով առանց մեկնաբանության: Նա ասաց. «Մարիամն իրավացի է: Նրանում ծնվածը Աստծո Որդի է»: Մեկնության կարիք չկար:

33 Աստված տալիս է Իր սեփական մեկնությունն անկեղծ, ազնիվ սիրտ ունեցողներին: Տղամարդի՛կ և կանա՛յք, որ հանդիպում եք խորհրդավորության, եթե դուք ազնիվ ու ակնեղծ եք, եթե հավատաք, Աստված միջոց ունի դա ձեզ մեկնելու համար: Նախ պարզեք, արդյոք դա խոստմունք է, թե ոչ: Եթե Հովսեփը ուղղակի հետ դառնար, հեռանար ավանդույթներից, վերադառնար Աստվածաշնչին, կգտներ, որ Եսային արդեն ասել էր, թե ինչ է լինելու:

34 Եվ հետագա զարգացումները՝ Նրա ծնունդը և դրա հետ կապված բոլոր իրադարձություններն ասվել էին Գրքերում «սուրբ մարգարեների միջոցով», ինչպես Պետրոս Առաքյալն է ասում:Եվ ոչ ոք իրավունք չունի դրանց իր անձնական մեկնությունը տալ: Դա հենց

այն էր, ինչ Աստված ասել էր, որ կատարվելու է: Նա Աստծո Խոսքի հայտնությունն էր, որ խոստացված էր այդ օրվա համար:Աստված ասաց, և այդպես էլ եղավ: Դա կարգավորեց ամեն բան:

35 Հիսուսն ասաց...Հիսուսի երկրային կյանքի ժամանակ, երբ նրանք Նրա ծառայությունը չէին կարողանում հասկանալ, որովհետև դա չափազանց զորավոր, արտասովոր էր (չէին կարողանում հասկանալ): Նրանք չէին կարողանում Նրան հասկանալ: Նա ասում է. «Քննեցե՛ք Գրքերը»: (Հուսով եմ, չխլացրի ձեր ականջները՝ խոսափողի մեջ ասնպասելի բղավելով): «Քննեցե՛ք Գրքերը, քանի որ կարծում եք, թե դրանցով հավիտենական կյանք ունեք, և դրանք են, որ Իմ մասին վկայում են»: Հասկանո՞ւմ եք: «Դրանք են, որ ասում են, թե ով եմ Ես»:

36 Տեսնում եք, Աստված բաշխեց Խոսքը: Այդ օրն Աստծո՝ (Էմմանուել) Աստծո հայտնության օրն էր, և «Նրա Անունը կոչվելու է Սքանչելի, Խորհրդական, Խաղաղության Իշխան, Հզոր Աստված, Հավիտենականության Հայր: Եվ Նրա Անունը կոչվելու է *Էմմանուել*՝ Աստված մեզ հետ է»: Աստված Դավթի մեջ էր, Մովսեսի մեջ էր: Աստված... Դա Աստված էր այդ ամբողջ ընթացքում, ով հայտնում էր Իրեն տվյալ ժամանակաշրջանի համար: Բայց այդ ժամանակաշրջանի համար Աստված ասել էր. «Կույսը կհղիանա և մի Որդի կծնի, և Նա կլինի Աստված մեզ հետ»:

37 Դրա համար նրանք խաչեցին Նրան՝ Ինքն Իրեն Աստված հռչակելու և շաբաթը չպահելու համար: Բայց Նա էր, Նա էր շաբաթի Տերը, և Նա Աստված էր: Նա սովորական մարդ կամ մարգարե չէր (չնայած Նա սովորական Մարդ էր և Մարգարե), Նա Աստված–Մարգարե էր: Եվ Նա Խոսքի իրականացումն էր, հենց այն, ինչ Աստված ասել էր, որ Ինքը կատարելու է: Ասաց. «Ձեզանից ո՞վ կարող է Ինձ մեղքի համար մեղադրել: Քննեցե՛ք Գրքերը, քանի որ կարծում եք, թե դրանցով հավիտենական կյանք ունեք, և դրանք են, որ Իմ մասին վկայում են»: Բայց նրանց ավանդույթները...Նրանք ապրում էին ուրիշ ժամանակաշրջանի արտացոլանքով:

38 Ինչպես մի քանի ամիս առաջ էի քարոզում *«Արտացոլանքի մեջ ապրելու»* վերաբերյալ: Ցոլքը, օդատեսիլի նման, կարող է առաջանալ արևի

ճառագայթների արտացոլանքից և լինել միայն պատրանք: Ուրիշ ժամանակաշրջանի ցոլքը պատրանք է: Մարդիկ միշտ փորձել են համապատասխանեցնել իրենց քայլերը տարիներ առաջ տեղի ունեցածի հետ: Լյութերականները շարունակում են ապրել լյութերական ժամանակաշրջանի արտացոլանքով: Լյութերական արևի լույսը հրաշալի էր իր ժամանակաշրջանում, Ուեսլեյինը լավ էր իր ժամանակաշրջանում, հոգեգալստականներինը՝ իրենց: Մենք շարունակում ենք բարձրանալ սանդուղքով, մենք ուրիշ ժամանակաշրջանում ենք ապրում, անընդհատ առաջ ենք գնում,և մենք չենք կարող շարունակ հետ նայել:

39 Երբ կանգ ենք առնում ինչ–որ բանի վրա, կարծում ենք, թե հասանք նպատակին: Սկսում ենք ապրել ավանդույթներով, որոնք գուցե ճիշտ էին իրենց ժամանակաշրջանում, բայց մենք պետք է շարժվենք առաջ: Քննեցե՛ք Գրքերը և տեսե՛ք, թե այսօրվա համար ինչ է խոստացված, այն ժամանակ կիմանանք, թե որտեղ ենք մենք, այն ժամանակ կարող ենք ասել, թե որտեղ ենք գտնվում:

40 Լութերը. կարող եք նայել Սուրբ Գրքում և կտեսնեք, թե այդ, այդ Սարդեսի ժամանակաշրջանում ի՞նչ էր խոստացած, դա կարող եք ստույգ տեսնել: Տեսե՛ք, թե ինչ հեծյալ ելավ, ինչ ելավ մարտի նրա դեմ, դա «մարդու ճարպկությունն» էր, ռեֆորմացիան: Նայե՛ք Ուեսլեյին և այլն: Դա անցնում էր Պենտեկոստեի ժամանակաշրջանով և ամբողջ այդ ժամանակաշրջանի ընթացքում, տեսե՛ք, թե ինչպե՞ս էր դա ընթանում: Նայե՛ք Գրքերին և տեսեք, թե որտե՞ղ ենք գտնվում: Դրա համար Հիսուսն ասաց. «Քննեցե՛ք Գրքերը»:

41 Տեսեք, թե որտե՞ղ ենք գտնվում: Ես հավատում եմ, որ մենք հենց հիմա Աստծո Որդու Գալստյան շեմին ենք գտնվում: Հավատում եմ, որ մենք այդ ժամանակաշրջանի հենց այն ժամումն ենք, որում Նա ցանկացած պահի կարող է հայտնվել: Ես հավատում եմ, որ Գրքերը հաստատում են, որ մենք այս աշխարհի պատմության վերջին ժամերում ենք ապրում: Ես դա տեսնում եմ իրադարձությունների ընթացքից: Տեսնում եմ, թե ինչպես է էկումենիկ խորհուրդը եկեղեցիներին տանում գազանի դրոշմի ընդունմանը: Տեսնում եմ Հռոմեական կայսրությունը և նրա գործելակերպը, ինչպես նաև մյուսների գործելակերպը: Տեսնում եմ, թե ինչպես են

նրանք միասին հավաքվում, խափանում են Լույսը, Ավետարանի Լույսը հանգցնում են: Յուրաքանչյուրը պետք է դրան պատկանի և դրանց լույսի ներքո քայլի, և դրանցից դուրս ոչ ոք գոյություն ունենալ չի կարողանա:Տեսնո՞ւմ եք, մենք ժամանակի վերջում ենք: Մեզ Աստծուց կառչելու և Նրա Խոսքին հավատալուց բացի ոչինչ չի մնացել: Խոսքը միշտ ճշմարիտ է:

42 Լավոդիկեի եկեղեցական ժամանակաշրջանը միակ շրջանն է, որում Քրիստոսը եկեղեցուց դուրս է արվել: Նա դրսում կանգնած թակում է: Ի՞նչ տեղի ունեցավ: Այս էկումենիկ խորհուրդը Նրան դուրս կհանի: Աստվածաշունչն ասում է, որ Նա դրսում կլինի, և դա այդպես է: Ի՞նչն են խափանում: Խոսքը: Իսկ Նա Խոնքն է, միշտ էլ եղել է Խոսքը և Խոսքն է հիմա էլ՝ այս երեկո: Նա է Խոսքը:

43 Աստվածաշունչն է ասում. «Աստծո Խոսքը ավելի կտրուկ է ու զորավոր, քան երկսայրի սուրը»: Եբրայեցիների 4-րդ գլխում ասվում է. «Մտքերի ու սրտի խորհուրդների զննողն է»: Խոսքն էր: Նրանք պետք է իմանային, թե Ով էր Նա, երբ Հիսուսը դա ասաց այն օրը:

44 Տեսե՛ք, թե Հիսուսն ինչ արեց: Մի օր, երբ Նա կանգնած էր այնտեղ, իր ծառայության սկզբում: Սիմոն, Սիմոն Պետրոս անունով մի մարդ եկավ Նրա մոտ: Երբ Պետրոսը նայեց և, և տեսավ Նրան, Հիսուսն ասաց. «Դու Սիմոնն ես, Հովնանի որդին»: (Նա պետք է իմանար, որ Մովսեսն ասել էր. «Ձեր Տեր Աստվածն ինձ նման մի Մարգարե դուրս կբերի ձեզ համար, և դուք պետք է Նրան լսեք»): Եվ ահա մի Մարդ, որ նրան երբեք չէր տեսել Իր կյանքում, ասաց. «Քո անունը Սիմոն է, դու Հովնանի որդին ես»: Նա իսկույն հասկացավ, որ դա ոչ այլ բան է, քան... Նրանք հարյուրավոր տարիներ շարունակ մարգարե չէին ունեցել, և ահա մի Մարդ նրան ասում է, թե ով է նա: Զարմանալի չէ, որ նա կարողացավ դա ընդունել:

45 Այդ ժամանակ Փիլիպպոսը գնաց, Նաթանայելին գտավ ծառի տակ և բերեց նրան Հիսուսի մոտ: Հիսուսն ասաց. «Ահա մի ճշմարիտ իսրայելացի, որի մեջ նենգություն չկա»:

Նաթանայելն ասաց. «Ռաբբի՛, որտեղի՞ց ես Դու ինձ ճանաչում»:

46 Հիսուսն ասաց. «Փիլիպպոսը դեռ քեզ չկանչած, երբ ծառի տակ էիր, Ես քեզ տեսա»:

47 Նա ասաց. «Ռաբբի՛, Դու ես Աստծո Որդին, Դու ես Իսրայելի թագավորը»: Նա գիտեր դա: Դա որևէ մեկնության կարիք չուներ, որովհետև Եհովան էր դա ասել:

48 Այնտեղ կանգնած էին, նրանք, ովքեր չէին հավատում դրան և ասում էին. «Այս Մարդը Բեեղզեբուղ է, կախարդություն է անում, Նա, Նա գուշակ է կամ նման մի բան»:

49 Հիսուսը նայեց նրանց և ասաց. «Դուք, որ այսպես Մարդու Որդու դեմ եք խոսում, կներվի ձեզ, բայց երբ Սուրբ Հոգին գա նույն բանն անելու, ով Դրա դեմ խոսի՝ նրան չի ներվի ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ գալիք աշխարհում»: Նա մարգարեանում էր մեր օրվա մասին, օր, որը կտեսնենք, որովհետև Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան:

Հիշե՛ք, որ Հիսուս Քրիստոսը Մովսեսի մեջ էր:

50 Նա նաև Դավթի մեջ էր: Երբ Դավիթը, որդին... Դավիթը՝ մերժված թագավորը, բարձրացավ լեռը և լաց եղավ Երուսաղեմի վրա, դա ոչ այլ ինչ, քան Քրիստոսն էր նրա մեջ, որովհետև մոտ ութ հարյուր տարի հետո Դավթի Որդին նստեց Ձիթենյաց լեռան վրա, նայեց Երուսաղեմին և լաց եղավ՝ ասելով. «Երուսաղե՜մ, Երուսաղե՜մ, քանի՜ անգամ կամեցա քեզ հավաքել, ինչպես հավն է հավաքում իր ձագերին, բայց դու չուզեցիր»:

51 Երբ Հովսեփը բանտում էր, դա Հիսուսն էր: Երբ նրան գրեթե երեսուն արծաթադրամով վաճառեցին, դա Հիսուսն էր: Երբ Պետափրեսը նրան կառավարիչ նշանակեց, դա Հիսուսն էր: Երբ Փարավոնի աջ կողմում նստեց: Եվ երբ նա դուրս էր գալիս, ամենքը...փողը հնչում էր և ամեն մարդ պետք է ծունկի գար նրա առաջ, դա Հիսուսն էր: Ոչ մի մարդ չէր կարող գալ Փարավոնի մոտ առանց, առանց Հովսեփի, ոչ ոք չի կարող գալ Աստծո մոտ առանց Հիսուսի: Դա Հիսուսն էր՝ կատարված մարգարեական Խոսքը, որն ասված էր ստվերների և խորհրդապատկերների միջոցով:

52 Երբ Հիսուսն այստեղ՝ երկրի վրա էր, Նա անում էր այն բոլոր բաները, որոնք մարգարեներն էին ասել, դրա համար նրանք իմացան, որ Նա Իր Խոսքի՝ Աստծո հայտնությունն էր: Դա մեկնության կարիք չուներ:

53 Նաթանայելն այս բանը տեսնելով, ծունկի եկավ և ասաց. «Դու ես Իսրայելի թագավորը, Աստծո Որդին,

Իսրայելի թագավորը: Մենք ճանաչում ենք Քեզ, որովհետև ոչ ոք չի կարող նման բան անել»:

54 Նիկոդեմոսը գիշերով եկավ և նույն բանն ասաց փարիսեցիների համար: Բայց հասկանո՞ւմ եք, նրանք այնքան կապված էին իրենց էկումենիկ խորհրդի հետ, որ չկարողացան Դա ընդունել: Նիկոդեմոսն ասաց այն, ինչ նրանք ասացին. ասաց. «Ռաբբի՛, մենք...»: Մենք, ո՞վ: Իրենց խորհուրդը: «Մենք գիտենք, որ Աստծուց վարդապետ ես եկել, որովհետև ոչ ոք չի կարող անել այս բաները, եթե Աստված Նրա հետ չլինի»: Նրանք ճանաչեցին Դրան և գիտեին Դա, բայց այնքան էին կապված իրենց խորհրդի հետ:

55 Աստված այս վերջին քառասուն տարիների ընթացքում այս ազգը ցնցեց Սուրբ Հոգու մկրտության միջոցով, իսկ կան տղամարդիկ և կանայք, որ դեռ Դրանից դուրս են գտնվում, որովհետև կապված են նույն բանի հետ, նրանք ապրում են ուրիշ ժամանակաշրջանի արտացոլանքով: Ինչո՞ւմն է խնդիրը: Ամեն մեկը ուզում է լինել մեթոդական, մկրտական, երեցական, լութերական կամ նման մի բան: Հասկանո՞ւմ եք, դա պատրանք է:

56 Նրանք ապրում էին Մովսեսի ժամանակվա արտացոլանքով:Հիսուսն ի՞նչ ասաց: Նա ասաց...Նրանք ասում էին. «Մենք Մովսեսի աշակերտներն ենք»:

57 Նա էլ պատասխանեց՝ ասելով. «Եթե Մովսեսին ճանաչեիք, Ինձ էլ կճանաչեիք, որովհետև նա Իմ մասին է գրել»:

58 Եթե Լյութերին ճանաչեիք, այս ժամանակաշրջանն էլ կճանաչեիք, եթե մեթոդականներին ճանաչեիք, ապա այս ժամանակաշրջանն էլ կճանաչեիք, որովհետև Քրիստոսը գրել է այս ժամանակաշրջանի մասին: Խոսքերը, որոնք կատարվում են, պետք է այս ժամանակաշրջանում կատարվեն: Կարիք չկա, որ որևէ մեկը մեկնի Դա, Աստված Ինքն է տալիս Իր սեփական մեկնությունը: Աստված Ինքն է մեկնում, որովհետև միայն Նա կարող է դա անել: Աստծո խոստումները միշտ հաստատում են Նրա ասածը, և դա էլ հենց մեկնությունն է:

59 Եվ այսպես, Հիսուսը, (ժամանակը խնայելու համար), Հիսուսը Հովի. 14.12–ում ասում է. «Նա, ով հավատում է Ինձ, գործերը, որ Ես անում եմ՝ Ինքն էլ պիտի անի»: Նա ասե՞լ է դա: Ճիշտ է: Դա մեկնության կարիք չունի:

Եթե մեկն անում է այդ գործը, ուրեմն դա Աստված է։ Անկասկած։

60 Նա նաև ասել է. «Ինչպես Ղովտի օրերում էր, այնպես էլ կլինի մարդու Որդու գալստյան ժամանակ»։ Հիսուսն է դա ասել։ Ասե՞լ է այս խոսքերը։ Իհարկե, ասել է։ Դա մեկնության կարիք չունի։

Նրանք ասում են. «Դե, դա նշանակում է...»։

61 Դա նշանակում է հենց այն, ինչ Նա ասել է։ «Ինչպես Ղովտի օրերում էր, այնպես էլ կլինի մարդու Որդու գալստյան ժամանակ»։ Ի՞նչն էր առանձնահատուկ Ղովտի օրերում։ Եկե՛ք մի պահ հետ վերադառնանք և պարզենք, թե ինչ էին անում նրանք։

62 Ղովտի օրերում երեք դասի մարդիկ կային՝ հավատացյալներ, կեղծ հավատացյալներ և անհավատներ։ Բոլոր խմբերում էլ այդպես է, նույն բանն է։

Մենք պարզում ենք, որ սոդոմացիները անհավատներ էին,

Ղովտը կեղծ հավատացյալ էր,

63 Աբրահամը՝ հավատացյալ։ Ուխտը նրա հետ էր հաստատված։ Նա էր սպասում խոստացված որդուն։ Նա էր, ով սպասում էր դրան։ Ամեն։ (Ես ինքս ինձ չեմ ասում «ամեն»։ *Ամեն* նշանակում է՝ «թող այդպես լինի»)։ Եվ դա այդպես է։ Աբրահամը Սոդոմում չէր, այլ վերևում էր՝ Սոդոմից դուրս։ Նա այսօրվա հոգևոր Եկեղեցու խորհրդապատկերն է։

64 Ղովտը հարանվանական եկեղեցու խորհրդապատկերն է, որը դեռ Սոդոմում է։ Տեսե՛ք, Աստվածաշունչն ասում է, որ՝ «Սոդոմի մեղքերը ամեն օր տանջում էին նրա արդար հոգին»։ Ինչո՞ւ նա բավական քաջություն չուներ վեր կենալու և բողոքելու համար։ Եկեղեցիներում այսօր շատ լավ մարդիկ են նստած, ովքեր նայում են պատուհանից և տեսնում են կարճատաբատ հագաց կանանց, և տղամարդկանց նման արարքներ անելիս, իրենց եկեղեցու անդամները եկեղեցի գնալու փոխարեն կիրակի օրը գոլֆ են խաղում, պիկնիկ խնջույքներ են անում, լողավազան են գնում և այլն։ Չորեքշաբթի երեկոյան եկեղեցի գնալու փոխարեն՝ մնում են տանը հեռուստացույց են դիտում։ Մարդիկ լավ էլ զգում են, որ պետք է մի բան ասեն, բայց եկեղեցական խորհուրդը նրանց դուրս կվռնդի։ Ի՞նչ է կատարվում։

Ղովտն է նորից, ով պատուհանից նայելով և մեղքը տեսնելով, վախենում է մեղքը մեղք կոչել։

65 Աբրահամը նրանց խառնաշփոթության մեջ չէր, այլ դրանից դուրս էր։ Նա հոգևոր Եկեղեցու խորհրդապատկերն էր։ Այժմ տեսեք, թե ինչ տեղի ունեցավ ժամանակի վերջում՝ կրակի թափվելուց անմիջապես առաջ։ Եվ նրանք հեթանոսներ էին։ Դա նախապատկերն է այն կրակի, որ այսօր պիտի իջնի հեթանոս աշխարհի վրա, երբ թագավորությունները կավիրվեն և կայրվեն։ «Երկինքները կբռնկվեն կրակով,— ասում է Տերը,— և նրանք խիստ տաքությունից այրվելու են»։ Դա նրա նախապատկերն էր։

66 Այժմ եկե՛ք պատկերացնենք նրանց։ Ահա Աբրահամը, ով արդեն դուրս էր եկել, Սոդոմում չէր, ինքը Սոդոմ քաղաքից դուրս էր։ Ղովտը դեռ Սոդոմում էր։

67 Տարօրինակ բան կատարվեց...Կեսօրվա տապին նա տեսավ իրեն մոտեցող երեք մարդու՝ սովորական մարդիկ էին, ովքեր քայլում էին իր կողմ։ Աբրահամը կաղնու տակ նստած հանգստանում էր։ Գուցե առավոտյան հոտի հետ դուրս էր եկել և գրեթե կեսօրին էր վերադարձել։ Եվ նա տեսավ, որ երեք տղամարդիկ առաջ են գալիս։ Բայց նրանց մեջ մի առանձնահատուկ բան կար, որ գրավեց նրա ուշադրությունը։ Օ՜հ, Աստված իմ։

68 Միշտ ինչ-որ առանձնահատուկ բան կա, երբ Աստված մոտենում է Իր ժողովրդին, ինչը ուշադրություն է գրավում։ Նրանք դա գիտեն։ Ինչ-որ բան ասում էր նրանց, որ այնտեղ հաստատում կա։

69 Աբրահամն արագ վազեց նրանց ընդառաջ և ասաց. «Տե՛ր իմ, խնդրում եմ, վրա՛նս մտիր և թո՛ւյլ տուր մի քիչ ջուր բերեմ, լվացե՛ք ձեր ոտքերը, և մի պատառ հաց բերեմ, կերե՛ք և ապա գնացե՛ք ձեր ճանապարհով»։ Այսպիսով Նա դարձավ նրա կողմը։ Աբրահամը նախրի մոտ վազեց և մի հորթ առավ, մորթեց ու տվեց ծառային, որ պատրաստի։ Շտապեց դեպի վրանը՝ Սառայի մոտ, և ասաց նրան. «Շո՛ւտ արա, այլուր հունցի՛ր, շինի՛ր մի քանի, այսինքն՝ մի քիչ այլուր հունցի՛ր, և նկանակներ շինիր օջախի վրա»։ Հետո բերեց այդ ամենը և մատուցեց նրանց։ Մինչ նրանք այնտեղ նստած հաց էին ուտում, սկսեցին նկատել, որ այդ Մարդը աչքերը չէր հեռացնում Սոդոմից։Եվ Նա ասաց...

70 Նրանցից երկուսը, հիշե՛ք, ճանապարհ ընկան դեպի

Սոդոմի երկիրը: Երկուսը գնացին այնտեղ: Խնդրում եմ, բաց մի՛ թողեք սա: Ես վկայակոչում եմ Հիսուսի ասածը: Նրանցից երկուսը գնացին Սոդոմ՝ դուրս բերելու Ղովտին և նրանց, ովքեր պատրաստ էին դուրս գալ այնտեղից: Այն երկուսը, որ իջան այնտեղ, գնացին Սոդոմ և քարոզեցին: (Իսկ Մեկը մնաց Աբահամի մոտ: Ուշադրությո՛ւն դարձրեք այդ նշանին, որ Նա արեց): Նրանք այնտեղ նշան ստացան, դա...սոդոմացիները կուրությամբ հարվածվեցին: Ավետարանի քարոզչությունը միշտ կուրացնում է անհավատներին: Եվ նկատե՛ք, թե ինչի պատճառով դա եղավ:

71 Իսկ այն Մեկը, որ կանգնած էր այնտեղ, նշան արեց Աբրահամի առջև:

72 Երբևէ ուշադրություն դարձրե՞լ եք: Ցանկացած պատմաբան...հետևե՛ք Գրքերին, հետևե՛ք պատմությանը, երբեք երեղեցու պատմության ընթացքում չի եղել մի մարդ, որ ուղարկված լինի աշխարհի նոմինալ եկեղեցիների, հարանվանությունների մոտ: Չի եղել մի մարդ, որի անունը Աբրահամի անվան նման վերջանա «համ» ով: Բայց այսօր կա մեկը՝ Գ-ր-ե-հ-ե-մ [անգլերենում՝ Graham, հայերենում գրվում է՝ «Գրեհեմ»]: Դա ճիշտ է: Գնում է այնտեղ, դուրս է կանչում նրանց: Դրանով նա հրաշալի աշխատանք է կատարում: Գրեհեմ՝ Բիլլի Գրեհեմ: Աստծո ծառան այնտեղ՝ այդ հարանվանությունների, քաղաքագետների և այլնի մեջ «ջարդուփշուր է անում այդ ամենը»:

73 Մի օր, երբ նրան առաջարկեցին իր թեկնածությունը դնել նախագահական ընտրություններում, նա կտրականապես մերժեց: Աստված օրհնի նրան դրա համար: Նրանց վիսկիի ընկերությունները...նա երբեք թույլ չէր տա, որ դա հասնի նման ցածր մակարդակի: Նրանք միլիոնավոր դոլարներ կծախսեին, նրա թեկնածությունը հանելու համար, որովհետև նա միևնույնն է ծխախոտի այդ ընկերությունները և նման բաները վերացնելու էր: Հասկանո՞ւմ եք, նա այնտեղ որպես Աստծո պատգամաբեր է ուղարկված սոդոմի բնակիչների համար: Ճիշտ այդպես:

74 Բայց հիշե՛ք, կար Մեկը, որ մնաց այնտեղ՝ Աբրահամի հետ, ուրիշ Մեկը, ոչ թե այն երկուսը, որոնք իջան Սոդոմ, ինչպես ժամանակակից ավետարանիչները՝ քարոզելու համար: Ուշադրությո՛ւն դարձրեք, Մեկը մնաց

բարձունքում: Երկուսը գնացին *այդ* ուղղությամբ, իսկ Մեկը մնաց *այնտեղ*՝ Աբրահամի մոտ: Եվ Նա, Ով մնաց Աբրահամի մոտ, նրան նշան տվեց:

75 Տեսե՛ք, նրա անունը «Աբրամ» էր, իսկ նրա կնոջը՝ «Սառա»: Դրանից ընդհամենը մեկ թե երկու օր առաջ Աստված հայտնվել էր նրան և ասել. «Այժմ ես քո անունը Աբրամից դարձնում եմ Աբրահամ»: (Տեսե՛ք, Գ-ր-ա-հ-ա-մ՝ վեց տառ է, որը մարդու թիվ է), բայց Ա-բ-ր-ա-հ-ա-մ՝ յոթ, յոթ տառ է. «համ», երկուսն էլ վերջանում են «համ» ով:

76 Եվ այսպես, այստեղ՝ բարձունքում, հոգևոր Եկեղեցում, Մեկը եկավ Աբրահամի մոտ, և ուշադրությո՛ւն դարձրեք, թե Նա ինչ ասաց: Ասաց. «Աբրահա՛մ», (ոչ թե «Աբրամ»), «Արբահա՛մ, ո՞ւր է քո կինը՝ «Ս-ա-ռ-ա-ն», (ոչ թե «Ս-ա-ր-ա-ն»): Ո՞ւր է քո կինը՝ Սառան»:

77 Տեսե՛ք, թե նա ինչ պատասխանեց. «Վրանում է, Քո հետևում»:

78 Եվ Նա ասաց. «Ես կվերադառնամ քեզ մոտ»: Տեսե՛ք, «Ես» անձնական դերանունը, Նրա տված խոստման համաձայն: Դա Աստված էր: Նա ասաց. «Ես կվերադառնամ քեզ մոտ»:

79 Եվ Սառան (ինչ-որ տեղ մենք նրան լավ ենք հասկանում), ներքուստ ծիծաղեց ասելով՝ «Ես հարյուր տարեկան պառավ, տերս էլ (Աբրահամը) ծերացել է, դրանից հետո զվարճությո՞ւն ենք ունենալու»: Ասաց. «Մենք նման հաճույք էլ չեն կարող ունենալ, երկուսս էլ արդեն ծեր ենք»: Եվ նա ասաց. «Նման բան չի կարող լինել մեզ հետ»: Ասաց. «Ինչպե՞ս: Դա անհնար է»:

80 Եվ այդ, այդ Մարդը, որ Աստված էր մարմնի մեջ, ասաց. «Սառան ինչո՞ւ ծիծաղեց և երկմտեց՝ այդպիսի բաներ ասելով»: Սառան վրանում էր, Նրա հետևում:

81 Այժմ տեսե՛ք, մի՞թե դա նույն ծառայությունը չէր, ինչ Հիսուս Քրիստոսն ուներ: Նա նայում էր բազմությանը և տեսնում էր նրանց մտքերը: Նա ասաց Պետրոսին, թե ով է նա և ինչ է իր հոր անունը: Նաթանայելին նույնպես:

82 Զրհորի մոտ կանգնած կնոջն ասաց, երբ վերջինս ասաց...Հիսուսն ասաց. «Գնա՛ Ինձ ջուր բեր, խմեմ, այսինքն՝ Ինձ խմելու ջուր տուր»:

83 Կինն էլ ասաց. «Տե՛ր, Ձեզ մոտ այդպիսի սովորություն չկա, որ խոսեք...Դուք՝ հրեաներդ, որ

խոսեք սամարացիների հետ։ Մենք իրար հետ չենք շփվում»։

84 Նա ասաց. «Բայց եթե դու իմանայիր, թե Ում հետ ես խոսում, ապա դու Ինձանից ջուր կխնդրեիր»։ Զրույցը շարունակվում է, և Նա ասում է. «Գնա՛, ամուսնուդ կանչի՛ր և այստեղ արի»։

Նա ասում է. «Ես ամուսին չունեմ».

Հիսուսն ասում է. «Լավ ասացիր, թե ամուսին չունես, որովհետև դու հինգ մարդ ես ունեցել»։

Նա ասում է. «Տե՛ր»։

85 Նայե՛ք սամարուհու և այդ, և այդ ժամանակվա քահանաների, այդ խորհուրդի միջև եղած այս տարբերությունը, որոնք ապրում էին ուրիշ ժամանակի արտացոլանքով և ասում էին. «Սա դև է»։ Նրանք պետք է մի պատասխան տային իրենց եկեղեցուն, որովհետև նրանք պահանջում էին դա։

86 Բայց այն, ինչ այդ խեղճ կինն արեց, այդ նախասահմանված Սերմը, որ իր սրտում էր...Նա հոգնել, ձանձրացել էր ամեն ինչից, նա շրջում էր փողոցներով որպես անառակ կին։ Բայց երբ Այս բանը տեսավ՝ ասաց. «Տե՛ր, տեսնում եմ, որ Դու մարգարե ես։ Մենք 400 տարի է, ինչ մարգարե չենք ունեցել, և մեզ ասել են, որ երբ Մեսիան գա, այս գործերը կանի»։ Օ՜հ, Աստված իմ։ Սերմը, որ այնտեղ էր, կյանք ստացավ։ Ինչո՞ւ։ Դա մեկնության կարիք չուներ։

87 Հիսուսն ասաց. «Ես, որ քեզ հետ խոսում եմ, Նա եմ»։ Մեկնության կարիք չկար։ Նա հրաշք կատարեց և վկայեց, որ Ինքն է Մեսիան, ամե՛ն, և վկայեց ճիշտ այն, ինչ Աստված խոստացել էր՝ «Ձեր Տեր Աստվածը ինձ նման մի Մարգարե դուրս կբերի»,— ասել էր Մովսեսը։ Ի՞նչ էր դա։ Սուրբ Գրքում գրվածի հաստատումը։

88 Կինը վազեց քաղաք և ասաց. «Եկե՛ք տեսեք մի Մարդ, ով ինձ ասաց այն ամենը, ինչ արել եմ։ Արդյոք սա Քրիստոսը չէ՞։ Արդյոք սա Ինքը չէ՞։ Նա ինձ ասաց այն, ինչ արել եմ»։

89 Այժմ ուշադրությո՛ւն դարձրեք, Հիսուսն էր այն Մարդու մեջ, որ մեջքով շուռ էր եկել դեպի վրանը և ասաց, թե Սառան ինչ էր մտածում վրանի ներսում։

90 Եբրայեցիս 4-րդ գլխում Աստծո Խոսքն ասում է, որ... Նա ասում է հետևյալը՝ «Աստծո Խոսքը երկսայրի սրից

ավելի զորավոր է ու կտրուկ, որ կտրում է ողնածուծի բաժանման սահմանը, և մտքերի ու սրտի խորհուրդների զննողն է»: Սա Խոսքն է: Եվ ամեն անգամ, երբ մի մարգարե էր հայտնվում, նա գալիս էր Խոսքի հետ, և Նա այդ ժամանակաշրջանի համար տրված Խոսքն էր: Եվ ի՞նչ էր անում Նա: Մարգարեն զանազանում է սրտերի խորհուրդները:

91 Հիսուս Քրիստոսն արեց դա, որովհետև Խոսքի լիությունն էր:

92 Հիսուսն ասաց. «Ինչպես Սոդոմի օրերում էր, այնպես էլ կլինի Մարդու Որդու գալստյան ժամանակ»: Աստծո Հոգին կիջնի երկրի վրա մարդու կերպարանքով, Նա կբացահայտվի նրանց մեջ (ամեն, հասկանո՞ւմ եք սա), և կկատարի նույն բաները, որոնք կատարեց, երբ մարմնով հայտնվեց Սոդոմում: Հիշե՛ք, նրանք սպասում էին խոստացված որդուն: Եվ անմիջապես դրանից հետո խոստացված որդին հայտնվեց: Դա վերջին նշանն էր, որը Սոդոմը և Աբրահամի խումբը տեսան խոստացված որդու գալստից առաջ: Նկատե՞լ եք դա: Եվ հիմա հոգևոր Եկեղեցին հասել է այդ ժամին:

93 Ինչ–որ մեկն ինձ ասաց. «Եղբայր Բրանհամ, դո՛ւ ասացիր, որ դա Աստվա՞ծ էր»:

94 Աստվածաշունչն է ասում, որ դա Աստված էր: Դա մեկնության կարիք չունի: Նա Էլոհիմն է: Աբրահամն այդպես կոչեց Նրան: Աստվածաշունչ ընթերցող յուրաքանչյուրը գիտի, որ *Էլոհիմ* նշանակում է «Ինքն Իրենով գոյություն ունեցող»: Նա էր Առաջինն ու Վերջինը, Սկիզբն ու Վերջը: Էլոհիմ:Աբրահամը Նրան «Էլոհիմ» կոչեց: *Աստված,* մեծատառերով, եբրայերենում, *Էլոհիմ,* ճիշտ ինչպես «Սկզբում Աստված», Էլոհիմ:

95 Նա մարմնով հայտնված Էլոհիմն էր, որ երկրային հագուստ էր հագած և մարդկային կերակուր կերավ: Ամեն: Նշան, որ վերջին օրերում Աստված դարձյալ հայտնվելու է Իր ժողովրդի մեջ մարդկային մարմնում: Ամեն: Հիսուսն ասաց. «Գործերը, որոնք Ես եմ անում՝ դուք էլ պիտի անեք: Եվ ինչպես Սոդոմի օրերում էր, այնպես էլ կլինի մարդու Որդու գալստյան ժամանակ»: Ամեն: Ոչ մի մեկնության կարիք չկա, միայն դրսևորման կարիք կա, ահա թե ինչ է անհրաժեշտ:Ամեն: Հավատո՞ւմ եք դրան:

Խոնարհե՛նք մեր գլուխները:

96 Մեր երկնայի՛ն Հայր, մենք այս երեկո գալիս ենք դեպի Քեզ Քո խոստումի համաձայն, որովհետև Դու ես ասել այս բաները: Դու ես դրանք խոստացել: Ոչ ոք բացի Քեզանից չի կարող կենդանացնել Քո Խոսքը: Դու ասացիր. «Թող լույս լինի», և լույս եղավ: Որևէ մեկնության կարիք չկար, դա կատարվեց:

97 Ինչպես Եսայի մարգարեությունից մեջբեցինք՝ «Կույսը պիտի հղիանա», և նա հղիացավ, որևէ մեկնության կարիք չկար, այդպես էլ եղավ: Հենց դա էլ տեղի ունեցավ:

98 Դու ասացիր, որ երբ Նա գա, Բեթլեհեմում կծնվի՝ «Հուդայի Բեթլեհեմում: Մի՞թե նա չէ Հուդայի, Իսրայելի ցեղերի մեջ փոքրագույնը, սակայն քեզնից պիտի դուրս գա Իմ ժողովրդի Իշխանը»:

99 Այն բաները, որոնք Նա պետք է աներ, թե ինչպես էր աղաղակելու խաչի վրա, ինչպես էր դատվելու, ինչպես էին Նրա ոտքերն ու ձեռքերը խոցվելու: «Բայց Նա մեր մեղքերի համար վիրավորվեց և մեր անօրենությունների համար հարվածվեց, մեր խաղաղության պատիժը նրա վրա եկավ, և Նրա վերքերով մենք բժշկվեցինք»:

100 Ինչպես Դավիթն է ասում. «Ես Նրա անձը դժոխքի մեջ չեմ թողնի և Իմ Սրբին ապականություն տեսնել չեմ տա»: Եվ երրորդ օրը, մինչ Նրա մարմինն ապականելու համար յոթանասուներկու ժամ լրանալը, Աստծո Խոսքն ասում է, որ Նա հարություն առավ: (Փարիսեցիներն ասացին, որ Նրա մարմինը գողացել են, նրանք մինչև հիմա էլ հավատում են դրան): Բայց մենք հավատում ենք Քո Խոսքին, Տե՛ր: Դա կատարվեց: Հիսուս Քրիստոսը հարություն առավ և ասաց. «Ես…Ահա Ես միշտ ձեզ հետ եմ, մինչև աշխարհի վերջը»:

101 Մենք հավատում ենք, որ այս երեկո Դու այստեղ ես: Մենք հավատում ենք, որ Դու նույն Հիսուս Քրիստոսն ես այսօր, ինչպես միշտ եղել ես: Դու միայն փնտրում ես աչքեր, ձեռքեր, ոտքեր, բերաններ, հոգիներ, մարմիններ, որոնք Դու կարող ես օգտագործել Քեզ հայտնելու համար: Օ՛հ, Աստված, սրբացրո՛ւ մեզ այս երեկո, որ տեսնենք կենդանի Հիսուս Քրիստոսին, որ ապրում է մեր մեջ: Թող Նա գա: Այդ ժամանակ կպատահի այն, ինչ եղավ այն հույների ծարավի հետ, որ այն օրը եկան և ասացին. «Տե՛ր, մենք ուզում ենք Հիսուսին տեսնել»: Իսկ նրանց պետք էր տեսնել Նրան: Օ՜, ի՜նչ հուզիչ պետք է լիներ Նրան տեսնելը:

102 Տե՛ր, Դու նույնն են այսօր։ Եվ Դու ես խոստացել, որ եթե ծարավ լինենք, կարող ենք տեսնել Քեզ։ «Մի փոքր ժամանակ էլ, և աշխարհը (անհավատները) չի տեսնի Ինձ, բայց դուք Ինձ կտեսնեք, որովհետև Ես ձեզ հետ կլինեմ, ձեր մեջ, մինչև աշխարհի վերջը»։ Մենք գիտենք, որ Դու նույնն ես երեկ, այսօր և հավիտյան։

103 Տե՛ր, Խոսքերն ասվել են, դրանք գրվել են, թող հիմա դա կատարվի Աստծո Փառքի համար՝ ցույց տալու համար, որ Նա Իր Խոսքը պահում է։ Ամեն։ Աստված օրհնի՛ ձեզ։

104 Ես մտադիր եմ աղոթքի շարք կանչել։ Կարծեմ Բիլլն ասաց, որ մեկից մինչև հարյուրը կամ նման մի բան աղոթքի թերթիկներ է բաժանել։ Այս պահին նա այստեղ չէ։ ...Քարտի համարը ո՞րն է...Որևէ մեկդ նայե՛ք ձեր թերթիկի հետևում...Դա, դա թիվ և տառ է՝ Ա, Բ, Գ, Դ կամ...Ո՞ր տառն է գրված։ Ա՞։ Լավ։

105 Երե՛ք սկսենք Ա տառով թերթիկներից, մեկ, երկու, երեք, չորս, հինգ թվերը թող վեր կենան։ Պարզապես այսպես վեր կացեք։ Ա տառով թերթիկներից թիվ մեկը, երկուսը, երեքը և չորսը։ Ես չեմ տեսնում չորս թիվը։ Աղոթքի թերթիկ թիվ չորս։ Մեկ, երկու, երեք։ Աղոթքի... Գուցե նրանք չեն կարող վեր կենալ։ Եթե այդպես է, նայե՛ք ձեր կողքի նստածի թերթիկին, գուցե նա թերթիկ ունի, բայց չի կարողանում վեր կենալ։ Հիմա արագ։ Ահա՛ չորրորդ թիվը։ Հինգ, աղոթքի թերթիկ թիվ հինգ։ Վեց, յոթ, ութ, ինը, տաս, տասնմեկ, տասներկու։ Պարզապես սկսե՛ք մոտենալ այստեղ, հենց ձեր համարը կանչում են։ Թիվ մեկ, երկու, երեք, անցեք այս կողմ, այստեղ։ Աղոթքի թերթիկ թիվ մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տաս, տասնմեկ զբաղեցրե՛ք ձեր տեղերը։ Տասնմեկ, տասներկու, տասներեք, տասնչորս, տասնհինգ, տասնվեց, տասնյոթ, տասնութ, տասնինը, քսան, քսանմեկ, քսաներկու, քսաներեք, քսանչորս, քսանհինգ։ Եթե ոմանք չեն կարողանում...

106 Տեսնում եմ այնտեղ՝ հետևում մի երիտասարդի, որ նստած է անվասայլակի մեջ։ Եթե ձեր համարը հնչի, տղա՛ս, և, և դուք չկարողանաք գալ...պարզապես բարձրացրեք ձեր ձեռքը, մենք կհոգանք, որ ձեզ հասցնեն այստեղ։ Հասկանո՞ւմ եք։

107 Այստեղ գտնվողներից քանի՞սը աղոթքի թերթիկ չունեն, բայց հիվանդ են։ Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը,

ուր էլ որ լինեք։ Հենց այստեղ, ճիշտ է, բարձրացրե՛ք ձեր ձեռքերը։ Հավատո՞ւմ եք։ Մինչ նրանք հավաքվում են նրանց, հավատո՞ւմ եք, որ Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան։ Քանի՞սն են հավատում։ Նայե՛ք այս ծառայողներին. մի՞թե Սուրբ Գիրքը չի ասում այսօր, երբայրնե՛ր, որ Նա Քահանայապետ է, Ով կարող է մեր տկարություններին կարեկից լինել։ Ճի՞շտ է դա։ Քանի՞սն են հավատում դրան։ Բարձրացրե՛ք ձեր ձեռքը։ Նա Քահանայապետ է, Ով կարող է մեր տկարություններին կարեկից լինել։

108 Ուստի, եթե Աստվածաշունչն է ասում, որ «Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան»,— քանի՞սն են հավատում դրան։ Ուրեմն ինչպես է Նա գործելու այսօր։Այնպես, ինչպես գործեց երեկ։ Դա ճի՞շտ է։ Որտե՞ղ է Նա այսօր։ Նստած է Մեծության աջ կողմում՝ Իր մարմինը, իսկ Սուրբ Հոգին հիմա այստեղ՝ այս դահլիճում է, որ ճանաչեցնի Նրան։

109 Ուշադրությո՛ւն դարձրեք, այժմ նայեք։ Ի՞նչ եղավ, երբ մի անգամ մի կին դիպավ Նրա հանդերձին։ Նա, այսպես ասած, աղոթքի թերթիկ չուներ, բայց դիպավ Նրա հանդերձին։ Եվ երբ դիպավ Նրա հանդերձին, Հիսուսը շրջվեց և ասաց. «Ո՞վ դիպավ Ինձ»։

110 Պետրոսը հանդիմանեց Նրան և ասաց. «Տե՛ր, Քո ասածը տրամաբանական չէ։ Բոլորը փորձում է դիպչել Քեզ, և Դու ասում ես, թե՝ ո՞վ դիպավ Ինձ»։

111 Նա ասաց. «Բայց Ես զգացի, որ Ինձանից զորություն դուրս եկավ»։ Քանի՞սը գիտեն դա։ *Զորություն,* որը նշանակում է՝ «ուժ», դուրս եկավ Նրանից։ «Ես ինձ թույլ եմ զգում, որովհետև ինչ–որ մեկը այլ կերպ դիպավ Ինձ»։ Եվ Նա շրջվեց և հայացքով բազմության միջից փնտրեց նրան, ումից գալիս էր այդ հավատքի աղբյուրը։

112 Բոլորը Նրան գրկում և ասում էին. «Օ՜, Ռաբբի՛, մենք հավատում ենք Քեզ»,— և նման բաներ։

113 Բայց կար մեկը, ով իսկապես հավատում էր Նրան։ Եվ նա դիպավ նրա հանդերձին և հավատաց, որ կբժշկվի, որովհետև իր սրտում ասել էր, որ եթե կարողանա դա անել՝ կբժշկվի։

114 Նա շրջվեց և նայեց բազմությանը, մինչև գտավ նրան և ասաց…ասաց, որ նրա, նրա արյունահոսությունը դադարել է, և նա բժշկված է։ Դա ճի՞շտ է։ Ահա թե ինչպես էր Նա գործում բազմության մեջ։

115 Այժմ ես հայտարարում եմ, որ Նա մեռած չէ, Նա կենդանի է, ինչպես միշտ: Եվ Աստվածաշունչն է ասում, Հիսուսն Ինքն է ասել. «Ինչպես Սոդոմի օրերում էր, այնպես էլ կլինի մարդու Որդու գալստյան ժամանակ»:

116 Այժմ նայե՛ք, կարևոր չէ, թե Աստված ինչ պարգև ունի այնտեղ՝ վերևում, ներքևում էլ պետք է լինի մեկը՝ դրան արձագանքելու համար: Աստվածաշունչն ասում է, որ երբ Հիսուսը մտավ մի քաղաք, Նա այնտեղ շատ հրաշքներ չկարողացավ անել նրանց անհավատության պատճառով: Ճի՞շտ է դա: Նույնն էլ այսօր է: Դուք պետք է հավատաք Նրան: Պարզապես պետք է հավատաք Նրան: Հավատքը միակ միջոցն է դրան հասնելու համար:

117 Աղոթքի շարքը պատրա՞ստ է: Այժմ տաս րոպեով ակնածալից լռություն պահպանեք: Ես չգիտեմ՝ կհասնեմ մինչև շարքի ծայրը, թե ոչ, այնտեղ քսանհինգից երեսուն հոգի է կանգնած: Բայց հիմա աղոթքի շարքում... Ձեզանից ամեն մեկը, որ այնտեղ՝ աղոթքի շարքում է, ով գիտի, որ ես անծանոթ եմ իրեն և ոչինչ չգիտեմ իր մասին: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Բոլորը, ովքեր աղոթքի շարքում են:

118 Այժմ եկեղեցում ովքե՞ր են նրանք, որոնք գիտեն, որ ես ոչինչ չգիտեմ իրենց մասին: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Հասկանո՞ւմ եք, ահա թե ինչ եմ ուզում ձեզ ասել, բարեկամնե՛ր: Ահա, թե ինչ է սա: Բոլոր այս ծառայողներն այստեղ՝ բեմի վրա են: Քրիստոսն է տվել այս խոստումը: Հասկանո՞ւմ եք, այն գրվել է: Ե՞րբ դա պետք է կարատվեր: Վերջին օրերում, անմիջապես Տիրոջ գալուստից առաջ: Ճի՞շտ է դա: Ուրեմն դա պետք է կատարվի:

119 Դա այն Խոսքն է, որը մարգարեացվել է այսօրվա համար: Սա Լյութերի ժամանակվա լույսը չէ, ոչ էլ Ուեսլեյի ժամանակվա և ոչ էլ նույնիսկ հոգեգալստականի: Լույսը գնաց իր ճանապարհով: Լյութերի ժամանակվա լույսը շատ լավ էր, մեթոդականներինը՝ նույնպես, նույնն էլ վերաբերում է մկրտական և հոգեգալստական եկեղեցիներին: Այս երեկո բոլոր եկեղեցիներից մարդիկ կան նստած այստեղ: Խոսքն անհատներին չի վերաբերում: Իսկ ի՞նչ եթե...

120 Դուք երբեք չէիք կարող Լյութերի պատգամը ասել մեթոդականին, որովհետև նա հավատում է սրբացմանը, իսկ Լյութերը ոչ: Հասկանո՞ւմ եք:

121 Երբեք չէիք կարող հոգեգալստականին ասել, որ

սրբացումով ամեն բան վերջանում է, որովհետև նա տեսել է պարգևների վերականգնումը: Նա չի հավատա դրան: Ո՛չ, նա ավելին է ստացել, քան դա: Հասկանո՞ւմ եք: Իսկ սա եկեղեցու վերջին շրջանն է, որը մենք դիտարկում էինք, և Աստվածաշունչն ասում է, որ այլևս ուրիշ շրջան չի լինելու:

122 Բայց պետք է մարդիկ հավաքվեն, հասկանո՞ւմ եք, և դրան ենք մենք հասնում:Այժմ հիշե՛ք, որ դա վերջին նշանն է: Արդյո՞ք մենք սպասում ենք խոստումի Որդուն: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը; Հավատո՞ւմ եք, որ Քրիստոսի մեջ լինելով՝ դուք Աբրահամի Սերունդն եք: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Ուրեմն, Աբրահամի Սերունդ, ստացի՛ր քո նշանը:Այդ նշանը Բաբելոնում չէ, հարանվանական աշխարհում չէ: Այն այստեղ է՝ ձեր մեջ, որ չեք գտնվում այդ խառնաշփոթության մեջ: Հավատացե՛ք դրան:

123 Ահա այս կինը ինձ բոլորովին անծանոթ է, մենք գրեթե նույն տարիքի ենք: Ես նրան երբեք չեմ տեսել իմ կյանքում: Եթե ես կարողանայի նրան բժշկել, կանեի դա, եթե նա հիվանդ է: Ես նրա մասին ոչինչ չգիտեմ: Տեսա՞ք, որ մի քանի րոպե առաջ նա բարձրացրեց իր ձեռքը: Ես, ես նրան երբեք չեմ տեսել: Նա պարզապես մի կին է, ով կանգնած է այնտեղ:

124 Այսօր նրանք եկան՝ մի կույտ աղոթքի թերթիկներ բերելով, խառնեցին և բաժանեցին մարդկանց: Առաջին համարն այստեղ է, տասներորդը՝ այնտեղ, տասնհինգերորդ համարը, յոթերորդ համարը, համար... այդպես: Նրանք ամեն օր բոլոր թերթիկները խառնում են անմիջապես ձեր աչքի առաջ: Եվ երբ նրանք կանչում են, բոլոր կողմերից են կանչում: Հասկանո՞ւմ եք: Եվ այժմ նույնիսկ աղոթքի թերթիկ ունենալը պարտադիր չէ, պարզապես նստե՛ք այնտեղ և հավատացեք:Ինչո՞ւ չ...

125 Ճմկտե՛ք ձեզ այս երեկո, տեսեք, թե որ ժամումն ենք ապրում: Հասկանո՞ւմ եք: Այն գրեթե ավարտվում է, բարեկամնե՛ր, գրեթե ավարտվում է:

126 Եվ այսպես, եթե Աբրահամի Աստվածը մեռելներից հարություն տվեց Հիսուս Քրիստոսին, և այդ Հիսուսը խոստացավ որ վերջին օրերում նույն նշանները, որոնք Աբրահամը...որոնք Հրեշտակը (Ով Աստված էր մարդկային մարմնում) կատարեց Աբրահամի առջև, խոստումի որդու գալստից անմիջապես առաջ, Հիսուսն ասաց, որ նույն բանը կատարվելու է այսօր:

127 Հիմա տեսնում ենք բոլոր այս ատոմային ռումբերը, այս հարանվանություններին և այլն և թե, ինչ խառնաշփոթության մեջ են նրանք գտնվում: Այստեղ տեսնում ենք Բիլլի Գրեհեմին և Օրալ Ռոբերտսին և բոլոր այդ մարդկանց, հոգեգալստական և հարանվանական պատգամաբերներին, տեսնում ենք, թե ինչպես է ամենն ընթանում՝ բերելով այդ նշանը: Բիլլի Գրեհեմն իսկապես բանիմաց աստվածաբան է, այն, ինչին հավատում են հարանվանությունները, Օրալ Ռոբերտսը բժշկում է մարդկանց, հենց այն, ինչին հավատում են հոգեգալստականները...

128 Սակայն տեսե՛ք Աբրահամի Սերնդի համար ուրիշ բան է խոստացվել: Նրանք այնտեղ՝ այդ հարանվանութունների շրջանում են, պետք է ինչ-որ բան կատարվի հարանվանություններից *դուրս* և հավաքի մարդկանց: Մենք սա կթողնենք վաղվա երեկոյի համար:

129 Տեսե՛ք, ես այդ կնոջը չեմ ճանաչում: Ես մեջքով շուռ կգամ դեպ իրեն: Եթե Տեր Աստված ինչ-որ բան հայտնի նրան, լինի դա ընտանեկան, ֆինանսական, կամ առողջության վերաբերող որևէ բան, նա կիմանա ճիշտ է դա, թե ոչ:

130 Եթե Նա այս երեկո անի այն, ինչ արել է այն ժամանակ, կհավատա՞ք այն Աստծուն...որն ինչպես Հիսուս Քրիստոսն է խոստացել լինելու է այստեղ վերջին օրերում: Քանի՞սն են հավատում, որ մենք ապրում ենք ինչպես Սոդոմում, երբ ողջ աշխարհը գտնվում է սոդոմական վիճակում: Ձեզանից քանի՞սն են հավատում, որ այն, ինչ ձեզ ասացի այս երեկո, ճշմարտություն է:Ուրեմն, Աբրահամի Սերունդ և զավակներ, հավատացե՛ք Աստծուն:

131 Այսպիսով ձեր միջից դուրս է գալու այն միտքը, որ այն, ինչ ասելու եմ այս կնոջը գալիս է այն բանից, որ ես նրա դեմքին եմ նայում, որ սա հեռազգացություն է: Բոլոր նրանք, ովքեր լսել են հեռազգացողության մասին, գիտեն, որ դա հնարավոր չէ: Հասկանո՞ւմ եք: Ըմբռնո՞ւմ եք: Երբևէ տեսե՞լ եք, որ հեռազգացը Ավետարան քարոզի: Երբևէ տեսե՞լ եք, որ որևէ ոգեհարցուկ Ավետարան քարոզի, հրաշքներ և նշաններ անի և նույն Հիսուս Քրիստոսին հռչակի: Ո՛չ:

132 Տեսնո՞ւմ եք, դա պարզապես...մարդկային միտքն է: Հասկանո՞ւմ եք, նրանք կույր են: Հավատո՞ւմ եք, որ նրանք կարող են կույր լինել: Աստվածաշունչն է ասում,

որ նրանք կույր պետք է լինեն: Դա ճի՞շտ է: «Հանդուգն, գոռոզ, ավելի հաճույքներ սիրող, քան աստվածասեր, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, բարուն թշնամի, աստվածապաշտության կերպարանքն ունենալով, բայց դրանում եղող զորությունն ուրանալով»:

133 Մի՞թե Հիսուսը չասաց Սուրբ Մատթ. 24.24–ում, որ վերջին օրերում երկու հոգիներն այնքան նման կլինեն իրար, որ եթե հնարավոր լիներ, ընտրյալներն էլ կմոլորվեին: Բայց դա հնարավոր չէ: Նրանք Աստծո մտքերում են եղել ի սկզբանե, և նրանք Աստծո մի մասն են:

134 Այժմ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված, հայտնի՛ր այս երեկո, որ այն, ինչ ասացի Քո մասին, ճշմարտություն է: Դա Դու ես, Տե՛ր: Թող Քո ծառաները խոնարհությամբ մի կողմ դնեն իրենց մտքերը, որպեսզի Դու կարողանաս օգտագործել մեր մարմինները Քո փառքի համար: Հիսուս՝ Աստծո Որդու Անունով: Ամեն:

135 Ի՞նչ է պարգևը: Դա մի բան չէ, որ դուք վերցնում, կտրում և շրջում եք: Ո՛չ, ո՛չ: Այլ իմանալն է, թե ինչպես պետք է ձեզ մի կողմ դնեք, որպեսզի Աստված կարողանա ձեզ օգտագործել: Պարգևը միայն քեզ մի կողմ դնելն է, հետո Աստված օգտագործում է դա:

136 Իմ հետևում կանգնած կինը մեռնելու է, եթե չբժշկվի: Վերջերս մի մարդ արդեն աղոթել է նրա համար: Նա քաղցկեղ ունի: Նա կրծքի և թոքերի քաղցկեղ ունի: Նրա համար աղոթել են և նա ջանում է հավատքով ընդունել, որ ինքը բժշկված է: Դա է ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ:Ճի՞շտ է դա, տիկին: [Տիկինն ասում է. «Այո, իհարկե, դա ճիշտ է»: Ծան. Խմբ.]: Եթե դա ճիշտ է, ձեռքով նշան արեք եկեղեցուն: Աբրահամի Աստվածը միշտ կենդանի է: Շատ լավ, շարունակեք հավատալ և կբժշկվեք: Ամեն:

Դուք հավատո՞ւմ եք: Դուք կասեք. «Իսկ ի՞նչ կասեք եկեղեցու վերաբերյալ»:

137 Այս կինը նստած է այստեղ իր...շարքի ծայրից երկրորդն է: Երբ ես շրջվեցի, հենց այնտեղ նրա ձեռքի շուրջը ինչ-որ բան տեսա: Դա արյան ճնշումը չափող գործիք է: Նա արյան բարձր ճնշում ունի: Ճի՞շտ է, տիկի՛ն: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Եթե հավատում եք, ձեր արյան ճնշումը կիջնի: Աբրահամի Աստվածը դեռ հարթակի վրա է:՝Նա միշտ այն է, ինչ եղել է՝ Աստծո Խոսքը այս օրվա համար:

138 Ինչպե՞ս եք ձեզ զգում: Հիմա հավատո՞ւմ եք: Հավատացե՛ք Աստծուն: Երեխայի տեսք ունի: Աստված գիտի ձեր սիրտը, օրիորդ, բայց ես չգիտեմ: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ինձ հայտնել, թե ինչ է պատահել: Կհավատա՞ք Նրան, եթե ասեմ դա: Դուք ձեզ համար չեք աղոթում, այլ ուրիշի՝ ձեր եղբոր: Եվ նա ծանր հիվանդ է և ինքը հյուսիսային մի քաղաքում է՝ Թուլարում: Նա հիվանդանոցում է, լեյկոզ ունի և բժիշկները նրան անհույս են համարում: Ոչ մի հույս չկա: Դա ճիշտ է: Դուք հավատո՞ւմ եք: [Աղջիկը լաց լինելով ասում է. «Այո»: Ծան. Խմբ.]: Շատ լավ: Ի՞նչ է ձեր ձեռքին: Վերցրե՛ք և դրեք այն նրա վրա: Մի՛ կասկածեք: Հավատացե՛ք: Ամեն:

139 Դուք հավատո՞ւմ եք: Ես այս կնոջը երբեք չեմ տեսել իմ կյանքում: Բայց Աստված միշտ Աստված է մնում: Ասացե՛ք, արդյո՞ք մարդը կարող է անել դա: Սա մարդու գործ չէ: Սա Աստված է, որ ըստ Հիսուս Քրիստոսնի խոստումի պետք է լիներ այստեղ, վերջին օրերում հաստատեր Իրեն (միայն Աբրահամի Սերունդի առաջ), ինչպես Սոդոմի օրերում էր:

140 Եվ այսպես, ես այդ կնոջը չեմ ճանաչում, մենք իրար անծանոթ ենք, կարծում եմ, որ առաջին անգամ ենք հանդիպում: Դուք հավատո՞ւմ եք, որ ես Նրա ծառան եմ: [Տիկինն ասում է. «Այո»: Ծան. Խմբ.]: Հավատո՞ւմ եք, որ սա Նրա Խոսքն է: [«Այո»]: Եվ գիտեք նաև, որ եթե... Խոսքը դեռ հիմա էլ մտքերի ու սրտի խորհուրդների զննողն է: Դա ճի՞շտ է: [«Ճիշտ է»]: Խոսքը նաև բժշկում է, եթե հավատաք: Հավատո՞ւմ եք: Մի ստվեր է իջել ձեզ վրա, սև ստվեր: Դա քաղցկեղն է: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ինձ հայտնել, թե որտեղ է այդ քաղցկեղը: Այն աղիքներում է, բժիշկն էլ է այդպես ասել: Հիմա հավատո՞ւմ եք, որ կբժշկվեք: [«Ամեն»]: Գնացե՛ք և մի կասկածեք, և Աստված ձեզ կբժշկի: Ամեն:

141 Բոլորդ հավատո՞ւմ եք: Սա հենց այն է, ինչ Նա խոստացել էր անել: Հավատացե՛ք Աստծուն, մի՛ կասկածեք:

142 Մենք իրար անծանոթ ենք: Ես ձեզ չեմ ճանաչում: Եթե անծանոթ ենք իրար, բարձրացնենք մեր ձեռքերը, որ եկեղեցին իմանա դա: Ես այս կնոջը երբեք չեմ տեսել իմ կյանքում:

143 Հավատո՞ւմ եք այնտեղ: Հավատո՞ւմ եք, որ Հիսուս Քրիստոսն է գործում: Ի՞նչ է սա: Նրա Խոսքն է: Երբ մարդիկ մերժում են Դա, մարդուն չեն մերժում, Խոսքն

են մերժում: Սա այն Խոսքն է, որ դրսում էր և չէր կարողանում ներս մտնել:

144 Այժմ այս կինն ինձ անծանոթ է: Ես նրան երբեք չեմ տեսել իմ կյանքում: Բժշկողն Աստված է: Հնարավոր է, որ դա ոչ թե բժշկության, այլ ուրիշ բանի համար է, բայց եթե Աստված բացատրի ինձ, թե որն է ձեր խնդիրը, կհավատա՞ք ինձ: Առաջին հերթին Դուք ուզում եք, որ աղոթենք ձեր ականջի համար: Ձեր մի ականջը խուլ է: Ճիշտ է: Դա այդպես է: Բացի այդ, ծխելու վատ սովորություն ունեք, որից ուզում եք ազատվել: Դրե՛ք ձեր մատը լավ լսող ականջի մեջ, լավ լսող ականջի մեջ: Շատ լավ: Այժմ հավատացե՛ք Աստծուն և շարունակեք ձեր ճանապարհը և մի...և այլևս չեք ծխելու, եթե հավատաք: Գնացե՛ք, և թող Տերն օրհնի ձեզ:

Տեսաք, թե ինչ կատարվեց: Մի՞թե Նա իրական չէ:

145 Ես ձեզ չեմ ճանաչում, մենք իրար անծանոթ ենք: Ես ձեզ երբեք չեմ տեսել իմ կյանքում, բայց Աստված ճանաչում է ձեզ: Եթե Աստված ձեր մասին ինչ-որ բան հայտնի, կհավատա՞ք:

146 Ողջ եկեղեցին կհավատա՞: Այստեղ ինչ-որ մեկը ճանաչո՞ւմ է այս կնոջը: Ձեզանից որևէ մեկը ճանաչո՞ւմ է նրան: Շատ լավ, ուրեմն կիմանաք՝ ճիշտ է դա, թե ոչ: Դա պետք է ապացուցի, որ սա ճշմարիտ է:

147 Տեսա՞ք, թե ընդամենը մի քանի րոպե առաջ ինչ կատարվեց: Հասկանո՞ւմ եք: Սա պարզապես...Ես ցնցվում եմ: Հասկանո՞ւմ եք: Ամեն ինչ խավարում է աչքերիս առաջ: Հասկանո՞ւմ եք, սա զանազանությունն է: Հասկանո՞ւմ եք, սա Սուրբ Հոգին է գործում, ոչ թե ես: Սա այսօրվա համար խոստացված Խոսքն է: Առաքյալների ժամանակներից ի վեր սա չէր կատարվել, երբևէ չէր կատարվել: Բայց ասվել է. «Անմիջապես մարդու Որդու գալուստից առաջ այնպես կլինի: Ինչպես Ղովտի օրերում էր, այնպես էլ կլինի Մարդու Որդու գալուստը»: Անհավատները չեն հավատում դրան: Նրանց տրված չէ հավատալ: Բայց հավատացյալները հավատում են:

148 Եթե հիմա Սուրբ Հոգին հայտնի սա, քանի՞սը կհավատան ամբողջ սրտով: Կբարձրացնե՞ք ձեր ձեռքը:

149 Դուք վիրավորվել եք: Վթարի եք ենթարկվել, և ձեր պարանոցի ողերը տեղաշարժվել են: Վնասվել է նաև Ձեր երիկամներից մեկը: Այդպես չէ՞: [Կինն ասում է. «Այո,

պարո՛ն»։ Ծան. Խմբ.]։ Հավատո՞ւմ եք։ [«Այո, պարո՛ն»]։ Դուք կբժշկվեք։ Փառք Տիրոջը։

150 Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել երիկամների վնասվածքները։ Ուրեմն գնացե՛ք և ընդունեք ձեր բժշկությունը։

151 Մոտեցե՛ք, տիկի՛ն։ Նայե՛ք այս կողմը։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել սրտի հիվանդությունները։ Շատ լավ, շարունակեք ձեր ճանապարհը և հավատացեք, և դուք կբժշկվեք։

152 Եկե՛ք այստեղ։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել ձեր մեջքը, առողջացնել ձեզ։ Ուրեմն գնացե՛ք և հավատացեք։

Պարզապես հավատացե՛ք Աստծուն. դա միակ բանն է, որ կարող եք անել։

153 Մոտեցե՛ք, տիկի՛ն։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել ստամոքսի հիվանդությունները։ Գնացե՛ք, ընթրեք և հավատացեք ամբողջ սրտով։

154 Մոտեցե՛ք։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բժշկել արտրիտը։ Ուրեմն գնացե՛ք, հավատացեք, և Աստված ձեզ կբժշկի։

155 Շատ լավ, եկե՛ք։ Հավատո՞ւմ եք ամբողջ սրտով։ Հավատո՞ւմ եք։ Կրկին արտրիտ է։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ձեզ բժշկել։ Գնացե՛ք, հավատացեք և ասեք. «Շնորհակալություն, Տե՛ր»։

Քանի՞սն են հավատում։ Դուք հավատո՞ւմ եք։

156 Այնտեղ նստած կարմիր շրջազգեստով կինը բարձրացրել է իր ձեռքը, նա տառապում է արյան շատ բարձր ճնշումից։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ձեզ բժշկել։ Հավատո՞ւմ եք։ Շատ լավ։ Դրե՛ք Ձեր ձեռքերը ձեր կողքը նստած կնոջ վրա և ասեք, որ նրա ձայնը վերականգնվելու է։ Ամեն։

Ահա։ Ամեն։ Հավատո՞ւմ եք։ Հավատք ունեցեք։

157 Ահա՛ այնտեղ մի մարդ է նստած, որ տառապում է արյունահոսությունից։ Հավատում եք, պարո՛ն, նստած է հենց այստեղ։ Այո՛, Դուք արյունահոսություն ունեք։ Հավատո՞ւմ եք, որ բժշկվելու եք։

158 Ձեր կողքին նստած կինը նույնպես տառապում է արյունահոսությունից և մեջքի ցավ ունի։ Հավատո՞ւմ եք, որ Աստված ձեզ բժշկելու է։ Հավատո՞ւմ եք։ Բարձրացրե՛ք ձեր ձեռքը և ընդունեք դա։ Հավատացե՛ք։

159 Ձեր կողքին նստած կինը սրունքների և ազդրի ցավեր ունի։ Հավատո՞ւմ եք, որ դա ճիշտ է, տիկի՛ն։ Հավատո՞ւմ եք, որ բժշկվելու եք։ Ուրեմն բարձրացրե՛ք ձեր ձեռքը և ասեք. «Ես ընդունում եմ դա»։

160 Շատ լավ, Ձեր կողքին նստած կինը վարակված է։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է այդ վարակը բժշկել, երիտասարդ տիկին, որ ակնոց է կրում։ Բարձրավրե՛ք ձեր ձեռքը և ասեք. «Ես ընդունում եմ դա»։ Շատ լավ, հավատացե՛ք դրան։

161 Ձեր կողքին նստած տիկինը երիկամների հետ կապված խնդիր ունի։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է բշժկել երիկամային հիվանդությունները, տիկի՛ն։ Շատ լավ, բարձրացրե՛ք ձեր ձեռքը և ընդունեք դա։

162 Ձեր կողքին նստած փոքրիկ աղջիկը խոփ ունի։ Հավատո՞ւմ եք, որ Աստված կբժշկի խոփը։ Բարձրացրե՛ք ձեր ձեռքը և ընդունեք դա։

163 Քանի՞սն են հավատում ամբողջ սրտով։ Ուրեմն կանգնե՛ք և ընդունեք դա։ Կանգնե՛ք Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծո Ներկայության մեջ։

164 Տեր Հիսուս Քրիստոսի Անունով, թող Սուրբ Հոգին հիմա իջնի այս դահլիճ և բժշկի ամեն մարդու, ով գտնվում է աստվածային ներկայության մեջ։

64-0205 ԱՍՏՎԱԾ ԻՐ ԻՄԿ ՄԵԿՆԱԲԱՆՆ Է
«Կերն Քառնթի» տոնավաճառ
Բեյկերսֆիլդ, Կալիֆոռնիա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org